

Առաջին անգամ զենքի, այդ թվում՝ առաջին անգամ ակոսափող հրազենի ձեռքբերման համար դիմորդը հանձնում է **տեսական և գործնական քննություն**:

Տեսական քննությունն անցկացվում է համակարգչային թեստավորման եղանակով՝ հարցատոմսում ընդգրկված հարցերին պատասխանելու միջոցով: Հարցատոմսը բաղկացած է 10 հարցից, յուրաքանչյուր հարցը՝ 1 միավոր: Անցողիկ շեմ է համարվում 8 միավորը:

Տեսական քննությանը ներկայացած քաղաքացին հարցատոմսում լրացնում է իր անունը, ազգանունը, հայրանունը և ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, որից հետո լրացնում է համապատասխան պատասխանները, որի համար նրան տրամադրվում է 30 րոպե ժամանակ: Հարցատոմս փոխելն արգելվում է:

Քաղաքացու արգելվում է՝

1) իր մոտ ունենալ բջջային հեռախոս, այլ էլեկտրոնային սարքեր, տեխնիկական միջոցներ, ուսումնական նյութեր կամ ծածկագրեր.

2) հաղորդակցվել քննությանը մասնակցող այլ քաղաքացիների հետ, միմյանց փոխանցել հարցատոմսերը կամ նշումների համար տրամադրված թերթիկները.

3) աղմկել կամ այլ կերպ խոչընդոտել քննության անցկացմանը:

Եթե հանձնաժողովի անդամը հայտնաբերում է, որ պատասխանող քաղաքացին թույլ է տվել սույն կարգի պահանջների խախտում, ապա դադարեցնում է քննությանը տվյալ քաղաքացու մասնակցությունը՝ այդ մասին կազմելով արձանագրություն:

Տեսական քննությանը քաղաքացու մասնակցությունը դադարեցնելու դեպքում՝ որպես գնահատական, ամրագրվում է 0 միավորը:

Տեսական քննության գնահատականը քաղաքացուն հայտարարվում է նույն օրը:

Տեսական քննությունը հաղթահարած քաղաքացուն նույն օրը տրվում է «Ձենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 11-րդ մասի 7-րդ կետով նախատեսված՝ զենքի հետ կապված և անվտանգության կանոնների իմացության տեսական և գործնական քննությունները հանձնելու համապատասխան փաստաթուղթ՝ հավաստագիր (Ձև 1), որտեղ լրացվում է միայն տեսական քննության գնահատականը:

Տեսական քննության անցողիկ շեմը չանցած քաղաքացին կարող է կրկին դիմել տեսական քննության մասնակցելու համար ոչ շուտ, քան 3 օր անց, բայց ոչ ուշ, քան տեսական քննությունը հանձնելու տասնհինգերորդ օրը:

Գործնական քննությանը մասնակցելու հնարավորություն է ստանում տեսական քննությանը անցողիկ միավոր ստացած քաղաքացին ոչ ուշ, քան տեսական քննությունը հանձնելու տասնհինգերորդ օրը:

Գործնական քննությանը քաղաքացին ներկայանում է հավաստագրով և անձը հաստատող փաստաթղթերով:

Գործնական քննությունը բաղկացած է 3 վարժությունից՝

1) զենքի կառուցվածքի և ռազմամթերքի վերաբերյալ գիտելիքների ստուգում.

2) հրաձգություն և նշանակետի խոցում.

3) անվտանգության կանոնների պահպանում և հրաձգության հրահանգների ճիշտ կատարում:

Ձենքի կառուցվածքի և ռազմամթերքի վերաբերյալ գիտելիքները ստուգելիս թեկնածուն ընտրում է քննական տոմսերից մեկը և հարցերին պատասխանում ըստ իր նախընտրած հերթականության՝ ցույց տալով ռազմամթերքի կամ զենքի այն մասերը և մեխանիզմները, որոնք նշված են քննական տոմսում: Քննական տոմսերից յուրաքանչյուրը բաղկացած է 3

հարցերից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 1 միավոր: Արդյունքում՝ 1 միավորը համարվում է անբավարար, 2-3 միավորները՝ անցողիկ: Հանձնաժողովի անդամը զենքի ձեռքբերման գործնական քննության գնահատման թերթիկում (Ձև 2) լրացնում է վարժության գնահատականը:

Քննական տոմսը փոխելն արգելվում է:

Ձև 1

ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

ԶԵՆՔԻ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տրվում է՝ _____-ին,
(անուն, հայրանուն, ազգանուն)

ծնված՝ _____, անձնագրի սերիա և
համար՝ _____,
որ նա հանձնել է զենքի հետ կապված և անվտանգության կանոնների իմացության
տեսական և գործնական քննությունները և ստացել հետևյալ գնահատականները՝

Տեսական՝ _____ միավոր, քննության օրը՝ _____, Կ.Տ.
Գործնական՝ _____ միավոր, քննության օրը՝ _____, Կ.Տ.
Տրվում է՝ ներկայացնելու ՀՀ ՆԳՆ ոստիկանություն:

----- Կազմակերպության տնօրեն/նախագահ՝

----- Կ.Տ.

(անուն, ազգանուն, ստորագրություն)

ԹԵՐԹԻԿ

ՋԵՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Դիմորդ՝

Ազգանուն, անուն, հայրանուն

« » _____ 20 թ.

Քննության օր, ամիս, տարեթիվ

Հ/Հ	Վարժության անվանումը	Վարժության միավորներ					Ընդհանուր
1.	Ջենքի կառուցվածքի և ռազմամթերքի վերաբերյալ գիտելիքների ստուգում	1		1		1	Անցողիկ՝ առնվազն 2
2.	Հրաձգության և նշանակետի խոցում						Անցողիկ 1
3.	Անվտանգության կանոնների պահպանում և հրաձգության հրահանգների ճիշտ կատարում	1	1	1	1	1	Անցողիկ 5

Քննություն ընդունող՝

Հանձնաժողովի նախագահ՝ _____ .

Ստորագրություն

Ազգանուն, անուն, հայրանուն

(ձևը լրաց. 19.06.24 թիվ 9-Ն)

(հավելվածը լրաց. 16.05.24 թիվ 7-ն, խմբ., լրաց., փոփ. 19.06.24 թիվ 9-Ն)

Պաշտոնական հրապարակման օրը՝ 31 օգոստոսի 2023 թվական: